ՆՐԻՄ. Հ. Ս. — Միր ձիրկան. . . . . 193
ԱԼԻՇԱՆ Հ. Ղ. Մ. — Առշալոյս և Արեւիկք լուսաւորութեան հայոց . . . . 199
ԷՖՐԻԿԵԱՆ Հ. Ս. — Գանձասար . . . . 204
ՋՐԱՔԵԱՆ Հ. Ք. — Ս. Գրոց ուսումն ի հայս . 208
ՅՈՎՍԷՓ Վ. ՍԱՆՏԱԼՃԵԱՆ — Ազնի, վանագն վիշապաքար . . . . . . 213
ՏԱՐԵԱՆ Հ. Ս. — Մագնիսական քուն . . 218
Թ. Թ. — Գեղեցկագիտութիւն . . . . 223
ԱՏԱ ՆԻԿՐԻ. — Քոնի կրակը. — Չքեզ տեսայ երազիս մէջ. – Թարգմ. Հ. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԱՍԳԱՆՏԵԼԵԱՆ . . . . . 226
Հանդէս մատենագրական. — Մ. ՇՈՎՐԵԱՆ Համեմատական ձեւախօսութիւն (morphologie) Մշու բարբառի՝ գրաբարի և միջին (դարուց) հայերէնի ձեւախօսութեան հետ. 227
ՅՈՎՍԷՓ ԾԻԱԳՈՂՋԱ. – Ինչպէս Տիրուհիները. Թրգմ. Հ. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԱՍԳԱՆՏԵԼԵԱՆ . . 231
ՆՐՍՄ. Հ. Ս. — Հանդէս Հանդիսից . . 235
Նամականի . . . . . . . 240

**Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի Որբախնամ յանձնաժողին՝ ԲԱԶՄԱՎԷՊի խմբագրութիւնը «Որբունի»ի թերթի հասոյթէն 1000 ֆրանք եւս յղած է ի նպաստ Թրքահայ որբերու։**

**ԽՄԲ.**

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ*

56. Հարուստ Պագուցի մը Լուլթֆիկ Յարութիւնեան իր կենդանութեան, կը կատարէ կըտակն, և կը յանձնարարէ կտակարարներուն, որ մահուընէն վերջը, ծախելով իր ստացուածքները. 10,000 րուբլի նուիրեն Պագուի Ս. Լուսաւորիչ եկեղեցիին. և 5000 րուբլի ալ էջմիածնի ճեմարանին, իսկ Մնացեալը Պարսկահայոց մէջ արհեստական ուսումնարան մը բանալու համար գործածեն։

57. Ալեքսանդրիայէն ազգային մը 100 ոսկի նուիրեր է Կ. Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցին։

58. Ռուսահայ կղերի ամենէն հմուտ եկեղեցականն՝ Արիստ. Եպիսկ. Սեդրաքեան, Կ. Պոլսոյ պատրիարքարանի որբախնամ յանձնաժողովին կ'իմացընէ որ իր Աստրախանի հօտը յանուն Ջանշեանցի՝ կը փափաքի որբանոց մը բանալ։ Յանձնաժողովէն կէս մը մերժողական պատասխան կ'ընդունի, առաջարկելով որ նոյն հաստատութիւնը թող պատսպարէ Ջանշեանցի Թրքահայ այն երկու որբանոցները, որոնք մի քանի տարիներէ ի վեր լքեալ մնացեր են։ Այդ յանձնաժողովը այս առաջարկը կրնար ուղղել այն Պագուցի միլիոնատէրերուն, որոնք միշտ ապարդիւն և ամուլ դաշտերու մէջ կը թափեն իրենց կտակներու արդիւնքն։ Աստրախանի մեծանուն առաջնորդը՝ լաւագոյն է որ իր մաքին վրայ հաստատուն կենայ, բանալով որբանոցն կամ Աստրախանի և կամ Պարսկաստանի մէջ. գերադասելի չէ՞ երկրորդը, ուր որբեր չեն պակսիր, և հոն ինչ ինչ առաւելութիւններ ալ չիկա՞ն։

59. Ֆրեզնոյի մէջ բողոքական և լուսաւորչական ազգայինք, եկեղեցիստակ առաջնորդներու ձեռքն մատնուած են։ Առաջնորդ կ'ընտրուին Ֆիլեան և Ալեքսանդրեան անհատներ. առաջինը 8000 տոլար հաւաքեր է ժողովարան մը շինելու համար, բայց այժմ այդ պարարտ գումարը հալեր է իր քսակին մէջ, երկրորդը ի նպաստ որբերուն նոյնպէս 8000 տոլար ժողվեր է. բայց որբերը ոչինչ չեն տեսած, տակը իրեն այգի մը գնելու ծառայած է։ Այս և ասոր նման չնորհազուրկ գործերու ո՞վ պէտք է կարեւորութիւն տալ և պատշաճն կատարել։

60. Փարիզու բարեգործական ընկերութիւնը Պարահանդէս մը տալով, ազգային կարօտելոց համար հաւաքեր է 1500 ֆր.։

61. 1901 Յուլիս 1էն Պարիզում կսկսի լոյս տեսնել հայերէն լեզուով «ԺԱՄԱՆԱԿ», հանդէս գրական, հասարակական, գեղարուեստական, քաղաքական.– «Ժամանակ»ը կունենայ այն բոլոր բաժինները, ինչ որ ունին եւրոպական գրական հանդէսները, առանձնապէս ուշադրութիւն դարձնելով դիտնական ու գեղարուեստական բաժինների վրայ։ — «Ժամանակ»ին աշխատակցելու պատրաստականութիւն են յայտնել բազմաթիւ հայ և եւրոպացի յայտնի հեղինակներ, որոնց երկերն արդէն ստացել է խմբագրութիւնը։ — «Ժամանակ»ը բաղկացած կլինի 5 տպագրական թերթերից (80 երես) La Revue et Revue des Revues հանդիսի դիրքով։ — «Ժամանակ»ի առաջին համարը լոյս կտեսնի ճիշտ 1901 թուականի յուլիս 1ին և ներկայ թուականին կը հրատարակուի երկու ամիսը մի անգամ, այն է յուլիս 1, սեպտեմբեր 1 ու նոյեմբեր 1. իսկ սկսած 1902 թուականի յունուար 1էն կհրատարակուի իւրաքանչիւր ամիս։ — Հարկ եղած դէպքերում, «Ժամանակ»ը կլինի պատկերազարդ և

* Տար. տես Ապրիլ 1901 :

կը տպագրէ եւրոպական երկերի բնագիրը եւրոպական լեզուներով, հայերէն թարգմանութեան հետ միասին: — Բացուած է բաժանորդագրութիւն 1901 և 1902 թուականների։ Բաժանորդագրութեան պայմանները պարզուած են հետեւեալ աղիւսակի մէջ.

| | ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1901 ԹՈՒԱԿԱՆԻ (ԿԻՍԱՄԵԱԿ) | ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1902 ԹՈՒԱԿԱՆԻ (12 ԳԻՐՔ) |
|---|---|---|
| Ռուսաստան | 3 ռուբլի | 10 ռուբլի |
| Անգլիա | 7 շիլլինգ | 1 ֆնտ. ստեր. |
| Ֆրանսիա, Բուլղարիա, Պարսկաստան, Ռումանիա, Թիւրքիա. Եգիպտոս, Յունաստան, Աւստրիա | 8 ֆր. | 25 ֆր. |
| Ամերիկա | 1 դօլար (ոսկի) | 5 դօլար |

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1901 ԵՒ 1902 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ (15 ԳԻՐՔ).

| | |
|---|---|
| Ռուսիա | 12 ռուբլի |
| Անգլիա | 1 ֆնտ. ստրլ. և 7 շիլլինգ |
| Ֆրանսիա, Բուլղարիա, Պարսկաստան, Ռումանիա, Թիւրքիա, Եգիպտոս, Յունաստան, Աւստրիա | 30 ֆրանկ |
| Ամերիկա | 6 դօլար |

Ամենայն տեղերից դիմել հետեւեալ հասցէով.

Paris (France), 64 rue Claude Bernard
Directeur de la Revue «JAMANAK»
S. Hakhoumian

«Ժամանակ»ի խմբագրապետ ու տնօրէնն է Պ. Ս. Հախումեան:

«Ժամանակ»ի առաջին համարը կուղարկուի միայն այն բաժանորդներին, որոնք կստորագրուին մինչեւ ներկայ թուականի յունիս 10ը (Ն. Տ.)։ — Այդ թուականից յետոյ ստորագրուողներին խմբագրութիւնս չէ խոստանում թիւ 1ը, որ պիտի տպագրուի այն քանակութեամբ, ինչ քանակութեամբ ստորագրուողներ լինին մինչեւ յունիսի 10ը (Ն. Տ.)։ — «Ժամանակ»ի Ա համարը Պարիզի փոստին կյանձնուի ճիշդ Յուլիսի 1ին (Ն. Տ.)։

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ

## ՄԽԻԹԱՐԵԱՆ ՅՈԲԵԼԻՆԻ

| | |
|---|---|
| | Ֆր. 2934,50 |
| Տիգրան Փիլիպպոսեան Գահիրէ . | 200,— |
| Հ. Համազասպ Վ. Սափարեան Առաջնորդ ի Կաֆա . | 225,— |
| Կոնիբեր . | 75,— |
| Խաչերես Աղա Չրախեան Սիմ. Ֆէրոպոլ . | 1000,— |
| Պետրոս Աղա Թոփալեան Սիմ. Ֆէրոպոլ | 140,— |
| Տիգրան Կամսարական Գահիրէ . | 50,— |
| Յարութիւն Գեւորգեանց Իւրովքա . | 383,— |
| Յակոբ Գասապեան Ռոստով . | 10,— |
| Էօտկար Շահին Փարիզ . | 30,— |
| Պալենց Ռուսճուգ . | 5,— |
| | Ֆր. 5052,50 |

Շարայարելի


# ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶ

Միամսեայ պատկերազարդ հանդէս մանուկների, ծնողների և դաստիարակների համար։ — Պատկերազարդ շաբաթաթերթ ընտանեկան ընթերցանութեան համար։

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՆ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԻՑ. ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Աղբիւրը լոյս կը տեսնի իւրաքանչիւր ամիս 2–3 թ., տարեկան 12 N. N. — Տարազը լոյս կը տեսնի ամեն կիրակի, իւրաքանչիւր N. 1-2 թերթ. տարեկան 48-50 N.N.

Աղբիւր–Տարազի տարեկան բաժանորդագրութիւնը յանելուածով և պրէմիաով 10 րուբլ. է, արտասահման 18 րբլ. կամ 50 ֆրանք։

ՊԱՐԻԶԻ ՄՈԴԱ, ԻԼԼՒՍՏՐԱՍԻՕՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ, գեղանի փառակազմ ՕՐԱՑՈՅՑ ստանում են ԱՂԲԻՒՐ–ՏԱՐԱԶԻ միեւնոյն հասցէով ստացող բաժանորդները։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 րուբլ., ՏԱՐԱԶԻնը 6 րուբլ.։

Հասցէ՝ Тифлисъ, редакція иллюстр. жур. АГБЮРЪ-ТАРАЗЪ կամ Tiflis (Caucase) Rédaction des journaux AGBUR et TARAZ.

Խմբագիր հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ


digitised by A.R.A.R.@